ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 164- Ա **05 հոկտեմբերի 2015 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ ու 1.17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 815-Ն որոշման 2-րդ կետը՝

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Սևանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպելու գործընթացն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Աղեկյան Ալբերտ -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Պողոսյան Անուշ -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ղուկասյան Վերգինե -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Խաչատրյան Հայկ -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական
Սարգսյան Նելսոն -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Ղազարյան Նորիկ -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Կյուրեղյան Միեր -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
Միրիմանյան Անահիտ -	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, «Սևանի

հիվանդանոց» և «Սևանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխան մասնագետներին:

2. Հանձնաժողովին՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 815-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Սևանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպելու գործընթացը:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ